13 մայիսի 2010 թվականի N 537 - Ն

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ 2008 ԹՎԱԿԱՆԻ ՀՈԿՏԵՄԲԵՐԻ 30-Ի N 1330-Ն ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԵՎ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հայաստանի Հանրապետության կառավարությունը ո ր ո շ ու մ է.

1. Հայաստանի Հանրապետության կառավարության 2008 թվականի հոկտեմբերի 30-ի «Հարկային վարչարարությանն օժանդակության նպատակով վիճակահանության անցկացման և պարգևավճարների տրամադրման կարգը հաստատելու մասին» N 1330-Ն որոշման 1-ին կետի 1-ին ենթակետով հաստատված կարգում կատարել հետևյալ լրացումները և փոփոխությունը՝

1) կարգի 2-րդ կետի 1-ին ենթակետը «առաջին» բառից հետո լրացնել «կամ վերջին» բառերով.

2) կարգի 2-րդ կետի 4-րդ ենթակետը «առաջինից» բառից հետո լրացնել «կամ վերջինից», իսկ «առաջին» բառից հետո՝ «կամ վերջին» բառերով.

3) կարգի 11-րդ կետը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«11. Յուրաքանչյուր վիճակահանության համար նախատեսված բազային պարգևավճարների հիմնադրամից վիճակահանության արդյունքում շահող կտրոնների բազային պարգևավճարը տրամադրվում է հետևյալ չափերով՝

հատուկ համարի առաջին նիշից սկսած՝ հաջորդական հերթականությամբ բոլոր ութ թվերը համընկնելու դեպքում՝	հինգ մլն դրամ
հատուկ համարի առաջին կամ վերջին նիշից սկսած՝ հաջորդական հերթականությամբ բոլոր յոթ թվերը համընկնելու դեպքում՝	հինգ հարյուր հազ. դրամ
հատուկ համարի առաջին կամ վերջին նիշից սկսած՝ հաջորդական հերթականությամբ բոլոր վեց թվերը համընկնելու դեպքում՝	հիսուն հազ. դրամ

հատուկ համարի առաջին կամ վերջին նիշից սկսած՝ հաջորդական հերթականությամբ բոլոր հինգ թվերը համընկնելու դեպքում՝	քսան հազ. դրամ
հատուկ համարի առաջին կամ վերջին նիշից սկսած՝ հաջորդական հերթականությամբ բոլոր չորս թվերը համընկնելու դեպքում՝	հինգ հազ. դրամ
հատուկ համարի առաջին կամ վերջին նիշից սկսած՝ հաջորդական հերթականությամբ բոլոր երեք թվերը համընկնելու դեպքում՝	երկու հազ. դրամ։».

4) կարգի 17-րդ կետը «առաջին» բառից հետո լրացնել «կամ վերջին» բառերով և հետևյալ բովանդակությամբ նոր նախադասությամբ.

«Առաջին կամ վերջին նիշից սկսած՝ հաջորդական հերթականությամբ առաջին և վերջին երեք նիշերը միաժամանակ համընկնելու դեպքում պարգևավճարը վճարվում է յուրաքանչյուր համընկնելու համար։»։

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող օրվանից։

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՎԱՐՉԱՊԵՏ Տ. ՍԱՐԳՍՅԱՆ

2010 թ. մայիսի
Երևան